

Uppm fring u

g mngs

891.99

3m - 81

NOV 20 1911
V. 4. 164
1617

ՍՄԲԱՏ ԻՒԶՅԱՇ

2-3804a

Մ Ր Ր Ա Ք Ր Ո Ջ Ս Զ Ր Ո Յ Յ Ը

(ՊԱՏՄԻԱԾՔ)



СМБАТЬ ЮЗВАШЪ

ТЕТИНЪ РАЗСКАЗЪ

(ПОВѢСТЬ)



891.99

32-81

ՏՊԱՐԱՆ Ն. Ա. ԵՐԵՒԱՆՑԵԱՆԻ
БАКУ
ТИПОГРАФІЯ Н. А. ЭРИВАНЦОВА
1911

09.07.2013

45426

APM
2-3804₂

Am-1617

333

891.99

30-81

ԾԱՆՈՒՅՈՒՄՆ

Այս գրքույկի հետ միասին կազմած պէտք է լոյս տեսնէր մօտ 90 երեսանոց մի պատմա-լածք՝ «ՈՏՆԱՏԱԿ ՏԻԱԾ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ» վերնագրով. սակայն ինձանից միակցամայն անկախ հանգամանքներ ստիպեցին յետ գցել այդ պատմալածքը, որը կը հրատարակւի մօտիկ ապագայում: Սորա համար բացուում է բաժանորդագրութիւն. բաժնեգինը՝ 20 կոպ.

Ցանկացողները թող ղիմեն հետեւալ հասցէով՝

Баку, типография Н. А. Эриванцова горчаков-ская улца. Тел. № 19—85.

Ս. ԻԻ.



39766-63

ՄՕՐԱՔՐՈՋՍ ԶՐՈՅՅԸ

(Պատմիածք)

Գ. գիւղի հիւսիսային կողմը ընկնում է հարթ փաղաթով մի տարածւած բլուր. բլուրի ամբողջ մակերեսովը սպիտակ կրաքարից է կազմւած, որի համար էլ գիւղացիք «Սիւտակ-Սար» են անւանում նրան:

Անշուք, անհամբոյր տեսք ունի Սիւտակ-Սարը: Սրածայր փշերից և կոշտ, դեմնատարած բոյսերից զատ՝ ուրիշ բուսականութիւն չի աճում այնտեղ. ու ամբողջ տարին սնուն, անիմատտ արտաքինով նայում է նա իւր ցածրում հարթութեան վրայ տարածւած Գ. գիւղին...

Ամառային արևի այրող ճառագայթներն ուղղահայեաց իջնելով երկիր, — սատաիկ տաքացնում են նրա լերկքարերից կազմւած մակերեսովը և չորացնում, սրբում են այնտեղ եղած բոյսերը:

Դպրոցի նորաւարտ աշակերտ էի, երբ, ամրանք, մէկ օր Գ. գիւղը դնացի՝ մօբսքրօջ տեսնելու:

Տխուր էր գիւղը ու միազանգուղ, խեղճութեան և աղքատութեան մէջ թաղւած: Գեանափոր խրճիթներից շատերի տանիքները մէկ կամ մի քանի կողմերից հաւասարել էին հողի հետ. պատերի կոլոր հատաքարերը խոնաւութիւնից, կարծես, լալիս էին և քեզ նայում արտասաւթոր աչքերով: Շունչ կենդանութիւն չէր նրկատւում գիւղում: Միայն պողտակ քափին էր, որ մէջ ընդ մէջ շարժւում էր և աւելում-տանում փոշու թանձր կոյտը մի տեղից միւսը:

Պատերի տակ մերթ-մերթ երևում էին մեծ փափախաւոր մարդիկ, որոնք անյոյս նստոտած՝ խաւար ու կնճռոտ ճակատներով ինչ — որ մութ մտքերի մէջ գլուխ-

— 3 —

ները վեր-վար էին անում, — ննջում էին... խուլ անկիւններում էլ, երևում էին յաճախ զոյգ ձուկերը կըրծքին խաչած, պղտոր հայեացքը սառած գեղջկուհիներ... լուկ էին և քաղցած շները, որոնք պառկած, կամ չորս ոտքերը տակը ծալած՝ կուչ էին եկել ու խեղճ-խեղճ նայում էին մոլորւած տէրերին և կարծես հասկանում ընդհանուր թշւառութիւնը:

Շատ անգամ նրանք անտարբեր էին դէպի անց ու դարձ անողները և չէին շարժւում տեղներից. իսկ եթէ երբեմն էլ դէպի օտարական էին դիմում, այս ժամանակ նրանց ձայնը աւելի կատուի մլաւոցին էր նման, քան թէ՛ գիւղացու կատաղի շան հաջոցին:

Տխուր էր ամեն-ինչ, տխուր էին և շները... ու այս առիւնը ծանր, խիստ ծանր ճնշել սկսան իմ կուրծքը...

Մօրաբոյրս վաղուց նկատել էր իմ տրամադրութիւնը և իր բարի սովորութեան համաձայն՝ աշխատում էր ամեն-կերպ ուրախ պահել ինձ.

— Ի՞նչ կայ, Յակոպ ջան, հոգեւ մատաղ, ինչո՞ւ այդպէս տխուր ես... մօրքուրիդ չես սիրում... մեր տունը սրտովդ չէ, ախպէ՛ր ջան... մօրքուրդ քեզ մատաղ...

— Ո՛չ, մօրքուր, մի անհանգստացիր... ոչինչ... էնպէս... եթէ քեզ ու ձեր տունը չ'սիրէի, այստեղ չէի գայ... այնպէս որ, էդպէս բան մի մտածի մօրքուր... ես քեզ սիրում եմ, բոլոր ազգականներին էլ սիրում եմ...

— Գինում, Յակոպ ջան, որ դու ամենքուս էր սիրում ես... դու մեզ չես մոռանայ, ախպեր ջան, եկածըդ ճանաչեքին մատաղ... սիրող ուրախ պահիր...

Իմ տրամադրութիւնը չէր փոխւում սակայն. իսկ մօրաբոյրս նիհար դէմքի խիստ գծապրութեան մէջ երևում էր շարունակ տուժւայ անհանգստութիւնը և հողատար յոյգիր... ու երկար-բարակ հասարկ կոացներով, կրկնում էր նա մէջ ընդ մէջ շարժումներով իր միկնոյն խօսքերը — Ի՞նչ կայ, Յակոպ ջան,

հոգուդ մատաղ, ինչո՞ւ տխուր ես... Վերջը, նա առաջարկեց ինձ դաշտ գնալ՝ դրօսներու։ Մենք անցանք Սիվտակ-Սարի միւս կողմը, ուր մի գեղեցիկ տեսարան բացւեց մեր առաջ։ Կանաչապատ հարթաւանջ բլուրները շուրջաւորի եկած՝ առել էին իրենց գրգռում մի սիրուն հովիտ, որը ծածկւած էր ամբողջովին թաւշապատ արտերով և արօրատեղիներով, ուր բլւր արծազանքներով լուում էր ջինջ օդի մէջ խայտաբղէտ գառան ու հորթուկի մեղմ դուրեկան բառաչը և զնգում էր մատաղ գառնարածի հմայիչ երգը։

— — —

Դեռահաս պատանի էի ես։ Բնութեան ամեն-մի տեսարան շատ խոճրը ազդում էր ինձ վրայ և հազարաւոր մտքերի ծովը գցում... Ես յիշեցի «Սիվտակ-Սարը», որը զրկւած է ամեն տեսակ գեղեցկութիւնից, որի վրայ մեռել է կեանքը... Իսկ միւս կողմից իմ հանդէպ տարածւում էր կանաչապատ, սիրուն հովիտը... Այս երկուսի տարբերութիւնը ստեղծեցին իմ գլխում մտածմունքների մի շարան... Իմ առաջ պատկերացաւ ցաւի և խեղճութեան ծովի մէջ տառապող գիւղը, որը քար-լուծութիւնով անց է կացնում իր անբաղդ տարիները նման այն Սիվտակ-Սարին, որը ոչ մի բաժին չունի բնութեան հրաշալիքներից և ոտքի կ'իսան է գարձել... Միւս կողմից մտաբերեցի աշխարհիս բազմաւորներին, որոնք շքեղութեան, ճոխութեան մէջ լուղում են, ինչպէս այս կանաչաւէտ հովիտն է...

— Դու էլի մտքերի մէջ ես, Յակոպ ջան... ասն տեսնեմ, ախպէր ջան, էդ ինչ է պատահել քեզ, որ ըսկի սիրտդ չի բացւում... Տես, ինչ սիրուն տեղեր են, ման արի, երգիր, սիրտդ ուրախ պահիր...

— Այո, տեսնում եմ, մօրքուր, խօսեցի ես, — թէ ինչպէս գեղեցիկ է իւր ծագկունքներով այս ձորը... Բայց Սարը... Սիվտակ-Սարը... ոչինչ չունի, ոչ մի

գեղեցկութիւն չունի, ոտի տակ է գնացել... Կեանքի անհաւասարութիւնն է, մօրքուր, որ մտածել է տալիս ու տանջում ինձ... Ձէ որ մարդիկ էլ այսպէս են, — մէկը բաղդաւոր է, ամեն-ինչով առատ, չգիտէ բոլորովին թէ խեղճութիւնը, աղքատութիւնը ինչ տեսակ դառնութիւններ են մարգուս համար... Իսկ միւսը՝ մերկ է, քաղցած է, ոտքի տակ է գնացել, ինչպէս «Սիվտակ Սարը»...

Էհ... զուր տեղը ընչի՞ համար ես քեզ տանջում, Յակոպ ջան, — էդ Աստու գործն է. մենք ի՞նչ կարող ենք Նրա միտքը հասկանալ, Նրա գործերը քննել...

Յետ գարձանք մենք։ Զառիվայրը Սիվտակ-Սարի վրայով ցածրացնում էր մեզ դէպի գիւղը։

Ես դարձեալ մտքերի մէջ էի թաղւած, Իսկ մօրաքոյրս շարունակում էր իւր դատողութիւնները անել Աստու մասին...

Գիւղը սկսում էր երեւալ. այս անգամ ես նայում էի նրան տենդոտ հետաքրքրութեամբ, կարծես, տեսնելու թէ որտեղ է թաղնւած այդ բոլորի հանգոյցը... Գիւղի մէջտեղում, արևի այրող շողերի տակ փայլում էր խայտաբղէտ գոյներով ներկած մի երկյարկանի շինութիւն։ Գեղեցիկ ու գրաւիչ էր նրա արտաքինը. շուրջը տարածւում էին փոշու և աղբի մէջ թաղւած խրճիթները...

— Մօրքուր, կարուկ կերպով ընդհատեցի ես նրա Աստու մասին արած գատողութիւնները.

— Դու սխալ ես խօսում. այդ Աստու գործերը չեն, ինչ ասում ես։ Աստուած մարդկանց վատ չի կամենում. Նա ուզում է, որ բոլորն էլ հաւասար ապրեն. բազմաւոր լինեն, իրար սիրեն։ Բայց մարդը ազատ է, չար է, խաբարայ է։ Նա մոլորեցնում, զրկում է ուրիշին աշխարհային բարիքներից, նրա ձեռքով իրեն համար հարստութիւն է գիղում, այ, այն փէլիլան բարձր շինութեան նման սիրուն շէնքեր է շինել տալիս, մէ-

չը հաստում, բաղդաւոր ապրում: Դէ հիմա տախր, մօր-
բնւր, այդ շինութեան տէրը ըսկի չի՞ զրկել, չի՞ աւ-
բաղդացրիլ ուրիշներին...

— Խօսքերս, կարծես գիւտեր էին մօրաքրոջս հա-
մար: Նա շղաձգօրէն գլուխը յիտ թեքեց, կուրծքը ուռ-
ցըրեց և բացականչեց.

— Ա՛խ, շատ ուղիղ ես ասում, Յակոպ ջան, քու
խօսքն է, որ կայ. Աստուած մարդկանց չի անբաղդա-
ցնում, համա մարդն է, անհուշտ մարդն է, որ զրկում
է, հացամուր է շինում ընդոց (նրանց): Անթիւ, անհա-
մար են քու ցուց տւած շինութեան տիրոջ անիրաւու-
թէնները. էդպիսով նա մէ երկրի չափ հարստութէն է
դիզիլ: Ա՛յ, յիս դարձիր ասեմ: Նա շուռ գալով ձեռ-
քը մեկնեց Բլրակի միւս կողմը կանաչին տող մի ար-
տի. էդ—արտը, Յակոպ ջան, 10 որբերի յուս ու ճարն
էր. որբերի պահպանողը մէ որբէքի կին է. ձմեռայ
կէսին տնով քաղցած էին մնացել. ամին տեղից յուսը
կտրած, քնաց էդ հարստի ոտներն ընկաւ, որ որբերին
սովից ազատէ՝ մէ քանի կոտ ցորեն իրեն պարտը տայ...
Հմա էդ անխիղճը են դրութեանը դրեց որբէքուն, որ
խեղճը, ճարը հատած, Բլրակի երեսը ծախեց նրան մէկ
փ ութ ալիւրի...

— Ա՛յ, հմի էլ դէպի ցած՝ առւին նայիր. տես-
նում ես այն խաս քարերով շինած ջաղացը: Էդ էլ մի
դառն չքաւոր մարդու էր: Հարուստը մէ քանի անգամ
առաջարկեց նրան, որ ջաղացը ծախի իրեն. հմա տէ-
րը պատասխանեց, որ էդ չի կարող անել, քանի որ էդ
ջաղացն է իր ընտանիքի յուս ու ապաւէնը: Հարուս-
տը եփ (երբ) տեսաւ, որ ջաղացատէրը խօսքի չի գալիս,
սուտ բարաթ հանեց վրան ու վկաներով, դատաւորնե-
րով ձեռքիցը խլեց: Յետոյ պատմել սկսեց մօրաքրոյս,
թէ ինչպիսի ստոր խաղեր է խաղացիլ այդ հարուստը
և իրանց հետ...

Գիւղին մօտենում էինք, Սիվտակ-Սարը վերջա-
նալու մօտ էր:

Վերև նայիր, Յակոպ ջան, նորից դարձաւ ինձ
մօրաքրոյս, և ապա ձեռքը ուղղեց բլուրի բարձունք-
ները: Ես նայեցի նորա ցոյց տւած ուղղութեամբ:
Դէպի գիւղն էր ցածրանում մի գեռատի աղջիկ, կուժը
ուսին. նորա տարիքը 15-ից անց չէին կարող լինել:
Առաջին հայեացքից կերևար նայողին, որ նա մի տան-
ջւած, վշտաբեկ գեղեցկուհի է: Շիկահեր ճօխ մօզերը
անկարգ, խճճւած շաղ էին եկել վայելչակազմ թիկուն-
քին, երեսի նրբին, գեղեցիկ գծագրութեան մէջ նըս-
տիլ էին ցաւի ու տառապանքի վաղօրեայ հետքեր,
մտնուշակապոյն աչքերի մէջ խօսում էր մի անուժ,
անլիզու. թախիժ: Հագուստները պատառուտուն ցնցո-
տիւներ էին և ոտքերին՝ մի զոյգ ծակոտւած ոտնա-
մաններ:

— Նայիր, Յակոպ ջան, այդպիսի գեղեցիկ աղ-
ջիկ ոչ թէ մեր գիւղում, մնալի մէջ էլ չի ճարւի, հա-
մա ի՞նչ է նրա դրութէնը...


Աղջիկը նայում էր մեզ. նրա շարժւածքից երևում
էր, որ հասկանում է՝ թէ խօսակցութիւնը իր մասին
է: Այդ միջոցին յանկարծ նա կռացաւ և ոտի տակից
մի ինչ որ բան դուրս հանեց. ապա ուղղեց և երեսը
ձեռքով ծածկեց: Նրա աչքերում մենք նկատեցինք
արցունքի կաթիլներ:

— Խեղճ, գոչեց մօրաքրոյս, ծանր է գալիս իրեն
իր դրութիւնը. ի՞նչ էր, ու ինչ դարձաւ:

Սա մի ունեւոր մարդու աղջիկ էր, Յակոպ ջան:
Հէրը մի անշառճու բարի մարդ էր. իսկ մէրը՝ մի խեղճ,
բերնկապ կին է: 4 տարի առաջ հէրը մեռաւ ու ինքը
ախպէրների հետ որբ մնաց: Քեռին գիւղի սուրբան էր,
հօրօղբիքն էլ՝ գիւղի խալիֆան. էս էրկուսը խօսք
մէկ արած էդ անգութ հարստի հետ, չը թողին, որ որ-
բերի վրայ արիկոններ հաստատուեն, ու յետև էլ

իրանց գիտցածը արին, ահագին կայքը էնպէս քաշեցին, սեփականացրին, որ հիմայ անճար ուրբերը մնացել են հացամուր... Ախ, քու ասածները, Յակոպ Չան, ճըշմարտութիւններ են, զրիցն են. Աստուած չէ, որ անբաղդախում է մարդուն. մարդն է, անաստուած մարդն է, որ ծծում է մարդու աշունչ, կորում է նրա ձեւքի հալալ հացը...

Մօրաքոյրս հիմա խօսում էր մարդկանց արարքներից, թւում էր նրանց անծայր անիրաւութիւնները... Իսկ ես խորատուգամ կեանքի առեղծածների մէջ, ուզում էի գտնել այդ բոլորի հանգոյցը, ուզում էի կտոր-կտոր անել այդ նզոված հանգոյցը, հիւլէի վերածել և նրա անտես մասնիկները տալ կառաղի փոթորկի բերան, հրամայել նրան, որ տանէ անհունութեան մէջ անհետ կորցնէ նրանց... հեռու... հեռու... երկրազնդից:



2-380

ՀԱՅՍ ԵՆ ՏԵՍԵԼՈՒ

ՄԱՐԱՏ ԻԽՋԱԶԻ ԿԵՄԵԼԱԿԱՆ ԱՂԽԱՄ ԹԻՒՆՆԵՐԸ

1. Ունեւորող տւած արդարութիւնը (պատկած)
2. Տարագիրը (վէպիկ)
3. Սկիզբն (զրոյց)
4. Պայքար. — պէտք է լինի սկիզբի մէջ յիշատակել
5. Մի շարք մանր պատմութիւններ
6. Տրտունջներ և ժամունջներ { Արձակ բաժնի տեղադրութիւն
7. Կարմիր երազներ {
8. Աշուղը — (վիպական պոէմ)
9. Սիրոյ ու տանջանքի յուշերից (ոտան. Բ պը

ՀԱՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1. Սիրոյ ու տանջանքի յուշերից (ոտանաւոր
Ա պրակ) — սպառնաւ
2. Մօրաբերոյց զրոյցը:

ԳԻՆՆ Է 3 ԿՈՊ.

Ցանկացողները կարող են դիմել՝ Բագու, Հայոց
Մարդասիրական Ընկեր. գրասենեակ, պ. Գարեգին
Տէր-Ստեփանեանին, Հեռախ. № 11—99.

Բացւած է բաժանորդագրութիւն «ՈՏՆԱ-
ՏԱԿ ՏԻԱԾ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ» Պատմութիւն
Բաժնեգիրը՝ 20 կոպ.

Բաժանորդագրել ցանկացողները թող դիմեն՝
Баку, типография Н. А. Эриванцова, на Горч. ул.
Тел. № 19—89.

<< Ազգային գրադարան



NL0353030

45426